

**Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը (ՀՊՏՀ) 2016/2017 ուսումնական տարվա համար հայտարարում է բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման ընդունելություն՝ հետևյալ մասնագիտությունների գծով.**

h/h	Մասնագիտության ծածկագիրը	Մասնագիտության անվանումը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար	Այդ թվում՝ ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված ղիմորդների համար	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ, առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի /վճարովի/	Ուսման վարձը /ՀՀ դրամ/
1	031101. 01. 6	Տնտեսագիտություն	14	2	186	600. 000
2	041101. 01.6	Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	10	2	190	600. 000
2'	041101. 01.6	Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ <b>(ՊՆ)</b>	6	-	-	-
3	041201. 01. 6	Ֆինանսներ /ըստ ոլորտի /	12	2	188	600. 000
4	041301. 01. 6	Կառավարում /ըստ ոլորտի/	11	2	189	600. 000
5	041401. 01. 6	Շուկայագիտություն (մարքեթինգ) /ըստ ոլորտի/	6	1	75	550. 000
6	056201. 01. 6	Վիճակագրություն	7	-	38	500. 000
<b>Ընդամենը</b>			<b>66</b>	<b>9</b>	<b>866</b>	

**ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ**

h/h	Մասնագիտության ծածկագիրը	Մասնագիտության անվանումը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար	Այդ թվում՝ ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված ղիմորդների համար	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ, առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի /վճարովի/	Ուսման վարձը /ՀՀ դրամ/
1	041101. 01.6	Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	2	-	52	400. 000

2	041201.01.6	Ֆինանսներ /ըստ ոլորտի	3	1	53	400.000
3	041301.01.6	Կառավարում /ըստ ոլորտի/	2	-	53	400.000
<b>Ընդամենը</b>			<b>7</b>	<b>1</b>	<b>158</b>	

### ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ

h/h	Մասնագիտության ծածկագիրը	Մասնագիտության անվանումը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար	Այդ թվում՝ ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված ղիմորդների համար	Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ, առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի /վճարովի/	Ուսման վարձը /ՀՀ դրամ/
1	041101.01.6	Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	1	0	19	350.000
2	041201.01.6	Ֆինանսներ /ըստ ոլորտի	1	0	19	350.000
3	041301.01.6	Կառավարում /ըստ ոլորտի/	1	0	19	350.000
<b>Ընդամենը</b>			<b>3</b>	<b>0</b>	<b>57</b>	

Վերոնշյալ մասնագիտություններով կարող են դիմել միջնակարգ, նախնական մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթություն ունեցող շրջանավարտները՝ առանց տարիքի սահմանափակման:

Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են 2016թ. մայիսի 5-ից մինչև հունիսի 1-ը ներառյալ՝ ժամը 9<sup>00</sup>-18<sup>00</sup>-ը: Հունիսի 25-ից մինչև հուլիսի 2-ը կանցկացվի նաև ընդունելության լրացուցիչ փուլ: Այդ փուլում կարող են դիմել Հայաստանի Հանրապետության երկքաղաքացիներն ու օտարերկրացիները, օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, նույն տարվա գարնանային զորակոչից զորացրված ղիմորդները, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տվյալ տարվա շրջանավարտները:

Հայտագրվելու համար անհրաժեշտ են՝

1) լուսանկարով տեղեկանք՝ տրված ԳԹԿ-ի կողմից և հաստատված դպրոցի տնօրենի կնիքով և ստորագրությամբ: Նախորդ տարիների շրջանավարտները ներկայացնում են ավարտական փաստաթուղթ՝ ատեստատ կամ դիպլոմ /բնօրինակը/,

2) 6 լուսանկար (3 x 4 սմ չափսի)

3) փաստաթուղթ զինվորական ծառայությանն առնչության մասին (կցագրման վկայական և պատճեն),

4) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր, կացության վկայական): Անձնագրի կամ ծննդյան վկայականի բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետու-

թյան կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից տրվող՝ անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ,

5) զինվորական գրքույկ և զինվորական կոմիսարիատից տեղեկանք՝ ժամկետային զինվորական ծառայությունն անցած լինելու, ծառայության վայրի և ծառայողական բնութագրի մասին:

Արտոնություններից օգտվող դիմորդները պետք է ներկայացնեն նաև տվյալ արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր: Տվյալ ուսումնական տարվա շրջանավարտները, տվյալ տարվա գարնանային գորակոչից գորացրված դիմորդները, օտարերկրացիները, ինչպես նաև միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ստացած դիմորդներն ավարտական փաստաթուղթը (ատեստատ, դիպլոմ) ներկայացնում են մինչև տվյալ տարվա հուլիսի 10-ը:

Դիմորդների հայտագրումը կատարվում է ՀՊՏՀ ընդունող հանձնաժողովում (ֆինանսական ֆակուլտետի 1-ին հարկ), որը աշխատում է բոլոր օրերին ժամը 9. 00-ից 17.00-ն (բացառությամբ մայիսի 8-ի, 9-ի, 15-ի):

Հասցեներ՝ ՀՊՏՀ Երևան, Նալբանդյան 128, հեռ՝ 593 473,

Ք. Գյումրի, Վ. Սարգսյան 32, հեռ՝ 00374 312 25410,

Ք. Եղեգնաձոր, Վայքի փողոց 4, հեռ 00374 281 25410: